# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

# Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ը

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 31-Ի N 132 Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԻ ԵՎ ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 13-րդ մասի և ՀՀ վարչապետի 2021 թվականի հունվարի 18-ի N 35-Ա որոշման պահանջներին համապատասխան ՀՀ կենտրոնական բանկը (այսուհետև՝ Բանկ) ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացրել Բանկի խորհրդի 2021 թվականի օգոստոսի 31-ի N 132Ա որոշմամբ հաստատված Բանկի 2022 թվականի վարչական ծախսերի նախահաշիվը և կապիտալ ներդրումների ծրագիրը՝ ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի նախագծում ներառելու համար:

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ժբ2» կետի պահանջի համաձայն սույն եզրակացությունը տրվում է Բանկի կողմից ներկայացված՝ վերը նշված փաստաթղթերի վերաբերյալ:

## <u>Ա. Վարչական ծախսերի նախահաշվի նախագծով նախատեսված ծախսերի վերաբերյալ</u>

1. Ըստ Բանկի 2022 թվականի վարչական ծախսերի նախահաշվի (այսուհետև՝ Նախահաշիվ), 2022 թվականին Բանկի վարչական ծախսերը կկազմեն 8,512.9 մլն դրամ, որը 2021 թվականի համար «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ 2021 թվական) հաստատված համապատասխան ցուցանիշից

ավել է 12.6 %-ով կամ 955.1 մլն դրամով: Ինչպես և նախկինում Բանկի 2022 թվականի վարչական ծախսերի գերակշիռ մասը բաժին է ընկնում Բանկի ապարատի պահպանման ծախսերին, որը կազմում է ծրագրվող վարչական ծախսերի 97.7 %-ը:

2. Ըստ Նախահաշվի, 2022 թվականին Բանկի ապարատի պահպանման ծախսերը նախատեսվել են 8,315.5 մլն դրամի չափով, որը 2021 թվականի համապատասխան ցուցանիշից ավել է 13.3 %-ով կամ 975.5 մլն դրամով: Բանկի ապարատի պահպանման 2022 թվականի ծախսերի 93.3 %-ը (2021 թվականին այդ ցուցանիշը կազմել է 92.6%) կամ 7,762.4 մլն դրամը բաժին է ընկնում Բանկի աշխատակիցների աշխատավարձի (ներառյալ պարգևատրումը և նյութական խրախուսումը) և սոցիալական ապահովության գծով ծախսերին:

2.1. Բանկի աշխատակիցների աշխատավարձի (ներառյալ աշխատավարձին հավասարեցված միջոցների) գծով ծախսերը 2021 թվականի համար հաստատված 6,390.8 մլն դրամի դիմաց՝ 2022 թվականին նախատեսվել է 7,322.8 մլն դրամ (931.9 մլն դրամ կամ 14.6 %-ով ավել), որը Բանկի կողմից ներկայացված տեղեկատվության (այսուհետ՝ Տեղեկատվություն) համաձայն՝ հիմնականում պայմանավորված է Բանկի ռազմավարությամբ ամրագրված թվային տրանսֆորմացիայով, և որի իրագործման համար պահանջվելու են ՏՏ և Կիբերանվտանգության ոլորտի միջազգային մակարդակի մրցունակ մարդկային ռեսուրսներ: Աշխատավարձի և դրան հավասարեցված միջոցների հաշվարկը իրականացվել է այդ լույսի ներքո՝ միաժամանակ պահպանելով Բանկի որդեգրած մոտեցումը. այն է՝ աստիճանաբար չեզոքացնել Բանկի և բանկային համակարգի միջին աշխատավարձերի միջև բացասական ճեղքվածքը, ինչը 2022թ. առավելապես կանխատեսվում է իրականացնել ՏՏ և կիբերանվտանգության ոլորտներում՝ ելնելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ կետի «զ» ենթակետի պահանջներից, համաձայն որի՝ Բանկի աշխատակիցների աշխատավարձի միջինը պետք է համապատասխանի ՀՀ բանկային համակարգի միջին աշխատավարձին:

Բանկի աշխատակիցների միջին ամսական աշխատավարձը 2021 թվականի նկատմամբ ավել է 69.3 հազ. դրամով և 2022 թվականի համար ընդունվել է 762.8 հազ. դրամ (ըստ Տեղեկատվության, 2022 թվականի համար ՀՀ առևտրային բանկերի կողմից ՀՀ բանկային համակարգի միջին ամսական աշխատավարձի չափը կանխատեսվում է 860.0 հազ. դրամ): Հարկ է նշել նաև, որ աշխատավարձի 2022 թվականի հաշվարկը կատարվել է 800 աշխատակցի հաշվով՝ 2021 թվականի 768 աշխատակցի փոխարեն:

Սոցիալական ապահովության այլ ծախսերի գծով Նախահաշվով նախատեսված է 439.6 մլն դրամ (2021 թվականի ծրագրային համապատասխան ցուցանիշից 35.8 մլն դրամ կամ 8.9%-ով ավել): Վերը նշված ծախսերը նախատեսված են Բանկի աշխատակիցների սոցիալական փաթեթի, այդ թվում՝ առողջության ապահովագրության ծախսերը հոգալու համար:

2.2. «Անձնակազմի գործուղում, ուսուցում և վերապատրաստում» հոդվածի ներքո պլանավորվում են տարբեր միջազգային կառույցներում և ՀՀ տարածքում ԿԲ-ի անձնակազմի վերապատրաստման և զարգացման ծախսեր, ինչպես նաև աշխատանքային այցերի և այլ շրջանակներում իրականացվող գործուղումներ:

Վերոնշյալ նպատակով Բանկի 2022 թվականի համար նախատեսվում է 437.4 մլն դրամ՝ 2021 թվականի ծրագրային ցուցանիշի համապատասխան:

2.3. Բանկի 2022 թվականի ներկայացուցչական ծախսերը ծրագրվել են 54.8 մլն դրամ՝ 2021 թվականի ծրագրային ցուցանիշին համապատսխան:

Ըստ Ծանոթագրության, 2022 թվականին նախատեսվում է մի շարք միջազգային պատվիրակությունների ընդունելություններ, օտարերկրյա բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ներկայացուցիչների այցեր՝ համատեղ ծրագրեր իրականացնելու վերաբերյալ քննարկումներ և բանակցություններ, գիտաժողովների, աշխատաժողովների կազմակերպման շրջանակներում:

2.4. Ծառայողական փոխադրամիջոցների շահագործման 2022 թվականի ծախսերը նախատեսվել են 60.8 մլն դրամի չափով, որը 2021 թվականի ծրագրային մակարդակից ավել է 7.7 մլն դրամ կամ 14.6 %: Ծառայողական փոխադրամիջոցների շահագործման ծախսերի հաշվարկները կատարվել են 30 ավտոմեքենայի համար՝ հիմք ընդունելով վառելիքի կանխատեսվող միջին շուկայական գները և 2020 թվականին Բանկի կողմից ավտոմեքենաների տեխսպասարկման համար կնքված պայմանագրերը:

3. Լրատվական տեղեկատվության և մասնագիտական գրականության ձեռքբերման ծախսերը 2022 թվականին կկազմեն 56.7 մլն դրամ, որը 2021 թվականի ծրագրային համապատասխան ցուցանիշից պակաս է 6.9 մլն դրամ կամ 10.9 %-ով:

4. Բանկի բնականոն աշխատանքային վիճակի ապահովման համար անհրաժեշտ տնտեսական նյութերի և արագամաշ առարկաների դուրսգրման հետ կապված 2022 թվականի ծախսերը Բանկի կողմից նախատեսվում են 94.9 մլն դրամի չափով, որը 11.4 մլն դրա-

մով կամ 10.7 %-ով պակաս է 2021 թվականի համար նախատեսված համապատասխան ցուցանիշից:

5. 2022 թվականի ծառայողական նպատակներով օգտագործվող կապի միջոցների հետ կապված ծախսերը նախատեսվում են 25.9 մլն դրամ, որը 2021 թվականի ծրագրային համապատասխան ցուցանիշից պակաս է 2.2 մլն դրամ կամ 7.7 %-ով:

6. Չնախատեսված ծախսերի գծով Նախահաշվում նախատեսված է 20.0 մլն դրամ (2021 թվականի ծրագրային համապատասխան ցուցանիշի մակարդակով), որը ըստ Տեղեկատվության նախատեսված է ՀՀ օրենքների և գործող տարբեր բնույթի սակագների փոփոխությամբ պայմանավորված ծախսերի իրականացման, ինչպես նաև այլ չնախատեսված վարչական ծախսերի կատարման համար: Չնախատեսված ծախսերը կազմում են Բանկի 2022 թվականի համար ծրագրվող վարչական ծախսերի ընդհանուր ծավալի 0.23 %-ը:

## Բ. Կապիտալ ներդրումների ծրագրի նախագծով նախատեսված ծախսերի վերաբերյալ

Բանկի կապիտալ ներդրումների առավելագույն սահմանաքանակը 2022 թվականի համար Բանկի կողմից առաջարկվում է սահմանել 7,307.4 մլն դրամի չափով, որը 2021 թվականի ծրագրային նույն ցուցանիշից ավել է 6,137.5 մլն դրամով կամ 525 %-ով:

Փոփոխության են ենթարկվել նաև կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալում առանձին տարրերի տեսակարար կշիռները:

Մասնավորապես, 2022 թվականի համար Բանկի կողմից նախատեսվում է ծրագրված կապիտալ ներդրումների առավելագույն սահմանաքանակի.

ա) 88.9 %-ը կամ 6,495.4 մլն դրամի չափով գումար հատկացնել համակարգչային տեխնիկայի, ծրագրային ապահովման, գրասենյակային գույքի, կապի միջոցների, Բանկի հիմնական գործունեությանն առնչվող այլ հիմնական միջոցների ձեռքբերման և կապիտալ վերանորոգման համար: Նշված գումարը 5,558.5 մլն դրամով կամ 593 %-ով ավել է 2021 թվականի համար հաստատված համապատասխան ցուցանիշը (2021 թվականին ծախսային այս տարրը կազմում էր կապիտալ ներդրումների ծրագրային ցուցանիշի 80.1 %-ը): Նշված խումբ ծախսերի ծրագրված գումարով նախատեսվում է ձեռք բերել.

- 3,745.7 մլն դրամի համակարգչային տեխնիկա և ծրագրային ապահովում (կազմում է այս խումբ ծախսերի 57.7 %-ը՝ 2021 թվականի 80.5 %-ի դիմաց): 2022 թվականի համար

նախատեսված գումարը ավել է 2021 թվականի ծրագրային մակարդակից 2,991.5 մլն դրամով կամ 397 %-ով,

- 111.7 մլն դրամի գրասենյակային գույք, կապի միջոցներ և Բանկի հիմնական գործունեությանն առնչվող այլ հիմնական միջոցներ (կազմում է այս խումբ ծախսերի 1.7 %-ը՝ 2021 թվականի 8.3 %-ի դիմաց), 2021 թվականի ծրագրային մակարդակից ավել է 34.2 մլն դրամով կամ 44.1 %-ով,

- 36.1 մլն դրամի անվտանգության ապահովման համար անհրաժեշտ հիմնական միջոցներ (կազմում է այս խումբ ծախսերի 0.6 %-ը՝ 2021 թվականի 4.5 %-ի դիմաց), 2021 թվականի ծրագրային մակարդակից պակաս է 6.3 մլն դրամով կամ 14.8 %-ով,

- 2,458.8 մլն դրամի էմիսիոն և կանխիկ դրամով գործառնությունների ապահովման համար անհրաժեշտ հիմնական միջոցներ (կազմում է այս խումբ ծախսերի 37.8 %-ը՝ 2021 թվականի 6.7-ի դիմաց), 2021 թվականի ծրագրային մակարդակից ավել է 2,396.1 մլն դրամով կամ 3821 %-ով:

- 143.0 մլն դրամ չնախատեսված ձեռքբերումների համար՝ իրավիճակների, ֆորս-մաժորային իրադարձությունների հանգամանքներում անհրաժեշտ ձեռքբերումների համար (կազմում է այս խումբ ծախսերի 2.2 %-ը՝ 2021 թվականի 0-ի դիմաց), որը համաձայն Տեղեկատվության՝ հաշվարկվել է Բանկում գործող բյուջետային գործընթացով նախատեսված ներքին ընթացակարգերի համաձայն:

բ) 3.5 %-ը կամ 260.0 մլն դրամը՝ Բանկը նախատեսում է իրականացնել վարչական շենքի վերակառուցման որոշ աշխատանքներ (որոնց մեկնարկը՝ համաձայն Տեղեկատվության, արդեն տրվել է 2021թ.-ին) և Բանկի աշխատանքային շենքերի տանիքներին արևային պանելների կառուցում:

գ) 2022թ. նախատեսվում է կապիտալ ներդրումներ Բանկի խնդիրների հետ ուղղակիորեն առնչվող իրավաբանական անձանց կապիտալում, որի շրջանակներում Բանկը նախատեսում է 450.0 մլն. դրամ արժեքով (6.2 %՝ 2021 թվականի 0-ի դիմաց) ներդրում կատարել «Ստակ Մանի Տրանսֆեր» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալում դրամական փոխանցումների հայաստանյան միասնական համակարգի զարգացման նախագծի շրջանակում:

դ) 2022 թվականի վարչական նպատակներով իրականացվող կապիտալ ներդրումների հետ կապված ծախսերը նախատեսվում են 102.0 մլն դրամ (2021 թվականի ծրագրային համապատասխան ցուցանիշից ավել է 89 մլն դրամ կամ 685 %-ով), որի շրջանակներում

նախատեսվում է փոխարինել օգտակար ծառայության ժամկետը լրացած թվով 6 ծառայողական ավտոմեքենա:

Ամփոփելով վերը նշվածը, գտնում ենք, որ Բանկի կողմից ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի նախագծում ներառելու համար ներկայացված Բանկի խորհրդի 2021 թվականի օգոստոսի 31-ի N 132 Ա որոշմամբ հաստատված Բանկի 2022 թվականի վարչական ծախսերի նախահաշիվը և կապիտալ ներդրումների ծրագիրը կազմված են օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանմամբ: